

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՅՆԵՐԵՆ
ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ ԹՈՒՐՔԵՐԵՆՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՅԱՅԱՆ

Արևմտահայերենում կան թուրքերենից փոխառյալ բազմաթիվ բառեր¹։ Դա արդյունք է ումի-սելջուկների քաղաքական տիրապետությանից սկսած երկու ժողովուրդների երկարամյա համատեղ կեցության ու շփման։

Հյուսիսարևմտա-թուրքական լեռնաշխարհում զարգացած է եղել նախքան սելջուկ-թուրքերի տիրապետությանը։ Հայկական արվեստի բազմաթիվ տարրեր ու զարգամտիվներ սերտ առնչություն ունեն ուրարտականների հետ։ Ուրարտու-հայկական ընդհանրությունները դրսևորվում են նաև բազմաթիվ բառերում, տեղանուններում և անձնանուններում։ Իսկ Աճառյանը գտնում էր, որ «Ոստայնանկություն»։—Այս արհեստը հին հնդեվրոպացոց արդեն ծանոթ էր. նախահայերը ժառանգել էին նրանցից ճիճել, ասեղն, ճեղք, ասր, գեղմն, ագանել, զգեճուլ, զգեստ, օթոց, ար բառերը², բայց կան մինչ այժմ անծանոթ բառեր՝ ճաղք, առէջ, բարաբ, գորգ, թել, իլ, ծոպ, կապերտ, կարժ, կծիկ, կկել, կկոց, կարել, հիւսել, մանել, շաղամաթ, ոստայն, ստէծ, և այլն։ Այս բառերի անշուշտ որոշ մասը հայերը ստացել են խալդիներից, ուրիշ խոսքով ոստայնանկության կիսկատար արհեստը կատարելագործել են ավելի քաղաքակիրթ խալդիների միջոցով³։ Աճառյանը նշում էր նաև, որ առանձնապես կարևոր է քննել Փոքր Ասիայի (Կապադովկիայի) հունական բարբառը, որը փոխառություններ ունի հայերենից։ Այդ մասին արժեքավոր ուսումնասիրություն ունի հույն հեղինակ Պ. Կարուլիդեսը⁴։

XI դարավերջում քոչվոր սելջուկները բռնությամբ հաստատվում են հայկական բարձրավանդակում և Կապադովկիայում։ Դ. Երեմեևը Փոքր Ասիայի սելջուկյան մշակույթի առանձնահատկությունների մասին խոսելիս իրավամբ նշում է. «Այդ կուլտուրան ստեղծել են ոչ միայն և, թերևս, ոչ այնքան սելջուկ թուրքերը, որքան տեղական ժողովուրդները⁵, իսկ մի այլ տեղ ընդգծում է. «Հնգևոր և առանձնապես նյութական կուլտուրան, ընդհակառակը, նրանք (սելջուկ թուրքերը—Հ. Գ.) վերցնում էին բնիկներից»⁶։ Թեև սելջուկները քաղաքականապես նվաճեցին Հայաստանն ու Փոքր Հայք-Կապադովկիան, բայց մշակութային առումով իրենք ենթարկվեցին տեղացիներին։ «Համաձայն

¹ Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան («Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Թ, Մոսկվա, 1902, էջ 3)։

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, 1940, Երևան, էջ 183։

³ Նույն տեղում, էջ 184։

⁴ Այն հայերեն թարգմանությամբ հրատարակել է Նարհիմը՝ «Կապադովկիո գավառական հին լեզուն և նրա արդի հունարեն գավառաբարբառը», «Մադիկ», 1891—1893 (Հ. Աճառյան, Հայերենի արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Երևան, 1971, էջ 27)։

⁵ Դ. Ե. Երեմեև, Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 151։

⁶ Նույն տեղում, էջ 176։

պատմության անփոփոխ օրենքի,— գրում է Մարքսը,— բարբարոս նվաճողներն իրենք նվաճվում էին նվաճված ժողովուրդների քաղաքակրթության կողմից⁷։ Այդ են վկայում նաև թուրքերի պաշտամունքային և աշխարհիկ բնույթի կառույցներում առկա հայկական ոճն ու քանդակները, զարդարվածի հայկական ավանդույթները՝ քարի, փայտի, մետաղի և հախճապակու վրա⁸։

Կապադովկիայում հայերն իրենց պապենական արհեստ-արվեստներին զուգընթաց զարգացնում էին նաև ազգային դորդարվեստի ավանդույթները։ Հետևաբար, զարմանալի չէ, որ «Հաճախ գորգերի նախշերն իրենցից ներկայացնում են երկրաչափականացված զարդեր,— գրում է Երեմեևը,— որոնց մեջ կարելի է լինում նշմարել մարդկանց ու կենդանիների պատկերներ, որոնց ռեալիստական պատկերումը արգելում է սուննի իսլամի դոգմատիկան։ Այլ կերպ ասած, այդ զարդերի քեմատիկան կապված է մինչմուսուլմանական ժողովրդական արվեստի հետ»⁹։ Ռումի-սելջուկ սուլթանության մեջ պետական լեզուն պարսկերենն էր, իսկ կրոնականը՝ արաբերենը։ Երկրի արտադրող ուժը ներկայացնող հպատակ ժողովուրդներից սելջուկները բազմաթիվ բառեր էին փոխ առնում, հատկապես արհեստների և արվեստների վերաբերյալ, որոնք շարունակում էին բացառապես մնալ հպատակների ձեռքում¹⁰։ Աճառյանը դիտել է տալիս, որ «թուրքերը փոխառյալ բառեր ունեն նաև հայերենից... Գավառական թյուրքերենի մեջ հայերեն փոխառությունների թիվը հարյուրների է հասնում»¹¹, «250 բառ... Այս բառերը կազմում են դրանց լեզվի ենթաշերտը (substrat) և հայերենի միջոցով անցել են նաև թյուրքերենին»¹²։ Նույնիսկ արևելյան և արևմտյան լեզուներում հայերենից մի շարք անուղղակի փոխառություններ կատարվել են թուրքերենի միջոցով։ Թուրքերենում մինչ այժմ էլ օգտագործվում են որոշ բառեր, տերմիններ և ասացվածքներ, որոնք իրենց ծագումով հայկական են։ Դրանք մասամբ կուտուրական փոխազդեցության, մասամբ էլ էթնիկական ասիմիլյացիայի հետևանք են։ Ներքոհիշյալ փոխառյալ բառերը վկայում են, որ ոչ միայն Ռումի-սելջուկ սուլթանության (XI—XIV դդ.), այլև օսմանյան տիրապետության շրջանում (XV—XX դդ.) գորգագործության բնագավառում հայկական գորգարվեստի ազդեցությունը տիրապետող է եղել։

TEL—հայերեն թել, դեման¹³։ Թել բառը և նրանից կազմված այլ բարդ ու ածանցավոր բառեր և դարձվածքներ հաճախակի են օգտագործվում թուր-

7 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, 1933, стр. 363.

8 S. Saladin, Manuel d'art Musulman: L'Architecture, Paris, 1907, t. 1, p. 446.

9 Երեմեև, նշվ. աշխ., էջ 325 (ընդգծումը մերն է—Չ. Գ.)։

10 К. Патканов, О месте, занимаемом армянским языком в кругу индоевропейских («Известия Кавказского отдела императорского русского географического общества», 1879—1886, т. VI, стр. 45); В. Kerestedjian, Quelques matériaux pour un dictionnaire étymologique de la langue turque, London, 1912. В. А. Гордлевский, Государство Сельджукидов Малой Азии. М.—Л., 1941, стр. 102—104. М. Guér, Mœurs et usages des turcs, Paris, 1947, t. I, p. 48.

11 Չ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Երևան, 1955, էջ 377։

12 Նույն տեղում, էջ 25։

13 ՀԱՐ, հ. 2, Երևան, 1973, էջ 169։ Ի դեպ, հոդվածում բնավոր բոլոր փոխառյալ բառերի բազմաթիվ կիրառություններ կան V և հետագա դարերի հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրական երկերում։

քերենում: Օրինակ՝ *telli*—թելավոր, *telsiz*—անթել, *tellemek*—կերպասի դերձանը քաշել¹⁴, *halının kilimi bir taraftan öbür tarafa atılan telleri ile tokunur*—գորգի կապերտը մի կողմից մյուսը զցվող թելերով է գործվում¹⁵, կամ փոխաբերական իմաստով՝ *her telden çalmak*—ամեն ինչից մի քիչ հասկանալ: Առձեռն բառարանում Թել-ի դիմաց նշված է՝ «դերձան, տաճկերեն թէլ»¹⁶: Նման բացատրություն են տալիս նաև Ն. Չազրճյանը¹⁷ և Բ. Գալըպ-ճյանը¹⁸: ՏՀաստատապես, — ասում է Աճառյանը, — հայերենից է թուրքական *تل*—*tel* «թել—դերձան. 2. լար, թուկ, շվան 3. նյարդ» ապա՝ «հայերենից փոխառյալ պետք է լինի պարսկերեն *تل*—*tela* «լար, առասան», և շարունակում է՝ «թուրքերենի միջոցով մեր բառը տարածված է շատ ուրիշ լեզուների մեջ... քրդերեն, խրվաթերեն, սերբերեն, ալբաներեն, բուլղարերեն, լեհերեն»¹⁹: Ուշագրավ է, որ գորգագործական նման բառեր իրենց արհեստ-արվեստի հետ հայկական ճարտարապետական ոճի, զարդաձևերի և մշակութային բազմաթիվ տարրերի հետ, հայերի միջոցով, անցել են բալկանյան-դանուբյան երկրներ²⁰:

HAV—հայերեն խավ, տաճկերեն խավ, հավ²¹, խավամազ: Նշանակում է նաև «շերտ» և «աղվամազ, կերպասի վրայի բարակ թաւությունը»²²: Օգտագործվում է գորգի կամ հյուսվածքի որոշակի բարձրությամբ կտրված խավահանգույցների ամբողջությունից առաջացած փափուկ և երփներանգ մակերեսի համար: Հայերեն խավ բառը փոխանցվել է թուրքերենին՝ *خاڤ*—*xav*, *hav*, և նրանով կազմված մի շարք ածանցավոր ու բարդ բառեր կան: Օրինակ՝ *havlu* կամ *xavlu*—բաղնիսի անձեռոց իմաստով, *خاڤلو*—*xavlu* (ոսմկերեն *havlu*) «թավոտ»: Բառս թուրքերենի միջոցով անցել է նաև սերբերենին, բուլղարենին՝ *havlija*—«խաւոտ, թաւ, բրդոտ»²³: Թուրքերեն բառարաններում *hav*-ի դիմաց նշված է *ince tüy* կամ գորգագործության առումով՝ *ilme adı verilen düğüm uçlarının belli uzunluklarda kesilmiş şekildir*—կարճ աղվամազ կամ կապ անունը

¹⁴ M. A l l A ğ a k a y, Türkçe sözlük, Ankara, 1959, s. 748.

¹⁵ Y. D u r u l v e O. A s i a n a p a, Selçuklu halıları, İstanbul, 1975, p. 12.

¹⁶ «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» (այսուհետեւ՝ ԱՐ), Վենետիկ, 1865, էջ 322:

¹⁷ Ն. Չ ա զ ը ճ յ ա ն, Նոր բարբառարան համառոտ հայերեն-տաճկերեն, Վիեննա, 1850, էջ 151:

¹⁸ Պ. Գ ա լ ը պ ճ յ ա ն, Գործնական ընդարձակ բառարան թուրքերենի հայերեն, Կ. Պոլիս, 1890, էջ 93:

¹⁹ ՀԱՐ, հ. 2, էջ 169:

²⁰ H a ş d e u, „Etymologicum Magnum“, G. Balş, „Influences armeniennes et georgiennes sur L'Architecture roumaine“, 1931 („ANI“, Bucureşti, 1942, p. 44). N. I o r g a, „Arméniens et Roumains“, Bucureşti, 1919, № 1, A. C h o i s y, Histoire l'architecture, Paris, 1899, J. S t r z i g o w s k i, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, t. 1, 2.

²¹ ԱՐ, էջ 574:

²² ՀԱՐ, հ. 2, էջ 350:

²³ Նույն տեղում, նաև A. S a k i s i a n, Pages d'Art Armenien, Paris, 1940, p. 27, note 5.

տրվող հանգույցի ծայրերի որոշ երկարությունը կտրված տեսակ²⁴, halının ha-vı ne kadar kısa olsa o kadar makbuldur—գորգի խավը որքան կարճ լինի, այնքան հարգի է: «Հայերեն խավ բառիս հետ նույն է ուտիերեն խա «բուրգ» բառը, որ փոխանցվել է նաև վրացերենին»²⁵:

HAÇ — հայերեն խաչ բառից է, որը կապվում է խոչ, խէչ «փայտ, ցից» բառերի հետ և նրանց ձայնադարձն է²⁶:

Ըստ Հյուբշմանի պարսկերեն խալ (խաչ) բառը հայերենից է վերցված²⁷: Հայերենից փոխառյալ է նաև թուրքերեն خاچ хаҷ կամ حاج haç (ալթմի haç) և ադրբեջաներեն хаҷ բառը՝ հայ²⁸, ուսու²⁹, օտար³⁰ և նույնիսկ թուրք հեղինակների վկայությամբ³¹: Ըստ տաճկերեն—հայերեն բառարանի خاچ—խաչ, նաև խաչվարի—خاچواری—խաչաձև³² հայերենից փոխառյալ են: Սովետական բառարանագետ Դ. Մազադանիկը նշում է. «haç, арм. крест, haçlamak, арм-м. распинать, haçvarı, арм-п. 1. крестообразный; 2. крестообразно»³³: Թուրքերենում և ադրբեջաներենում հայերեն խաչ բառից կազմված բազմաթիվ ածանցավոր ու բարդ բառեր կան, որոնք արդյունք են երկու ժողովուրդների շփման և համատեղ կեցության: Օրինակ՝ حاج ایتمك хаҷ (haç) itmek—կնքել, haç cikarmak—խաչ հանել, խաչակնքել, خاچلامق—хаҷламақ, haçlamak—խաչել, خاچلامش—хаҷламәш ալթմի haçlamış—хачламаš—խաչեցյալ, haçi suya atma—խաչը ջուրը գցել (հայկական եկեղեցական շրջահեղինակի արարողությունը), haçlilar—խաչակիրներ, իսկ ադրբեջաներենում՝ «хачламаг—խաչել, хачландырмаг—խաչակնքել, хачпәрәст—խաչապաշտ, քրիստոնյա, хачпәрәстләк—խաչապաշտություն, քրիստոնեություն»³⁴: Մակայն առավել հետաքրքրական է հայերեն խաչվար (խաչաձև) կամ խաչվառ (խաչադրոշ³⁵ կամ եկեղեցական դրոշ) բառի նույնաձև և նույնիմաստ օգտագործումը թուրքերենում՝ خاچوری—хаçvari, haçvari: Յոզգատի և Թոգատի (Եվդոկիայի) շրջանի երբեմնի հայաշատ գյուղերում մինչև օրս օգտագործվում է خاچوک—хаçuk—խաչուկ (գյուղական տների առիքների խաչաձև դրված գերանի համար), հայերենում նաև խեչակ: خاچورکت хеçurget—хьчирдех—խաչերկաթ (թոնրի բերանին դրված խաչաձև եր-

²⁴ Sümerbank aylık endüstri ve kültür dergisi, cilt. 5, Temmuz-Ekim, 1965, sayı 49—52, p. 118.

²⁵ ՀԱՐ, հ. 2, էջ 350:

²⁶ Նույն տեղում, էջ 334:

²⁷ J. H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig, 1895—1897, S. 158.

²⁸ ԱՐ, էջ 569, նաև «Բառգիրք հայկազնան լեզուի» (այսուհետև՝ «Բառգիրք»), Կ. Պոլիս, 1844, հ. 1, էջ 554:

²⁹ А. Будагов, Сравнительный словарь турецко-татарских наречий, т. I, СПб., 1869, стр. 524.

³⁰ P. de Lagarde, Armenische Studien, Göttingen, 1877, § 968.

³¹ M. Alı Ağakay, նշվ. աշխ., էջ 331, նաև Pars Tuğlacı, Okyanus, 20 yüzyıl ansiklopedik Türkçe sözlük, İstanbul, 1971, t. 2, p. 981.

³² Մ. Արիկյան, Ընդարձակ բառարան տաճկերեն-հայերեն, Կ. Պոլիս, 1892, էջ 228:

³³ Д. А. Магазаник, Турецко-русский словарь, М., 1945, стр. 225.

³⁴ Ռ. Հ. Բազրամյան, Հայերեն բառեր «Քյաթարի Դազա Դորգուզում» («Պատմաբանասիրական հանդես», 1974, № 1, էջ 162):

³⁵ «Բառգիրք Հայկազնան լեզուի» (այսուհետև՝ ՀՀՐ), հ. 1, Վենետիկ, 1769, էջ 242:

կաթը): Գավառական այս բառը փոխ են առել Կեսաբիայի թուրքերը և հույները, նվերկիայի թուրքերը և Սղերդի շրջանի արաբները: Հայերեն այս բառն անցել է նաև ռուսերենին՝ коверта, ուկրաիներենին, լեհերենին, լիտվերենին և այլ լեզուների: Хауар—(մեղվի կթոցում խաշաձև դրվող փայտ), նույնպես հայերենից անցել է թուրքերենին և ադրբեջաներենին: Շինարարության բնագավառից հայտնի են хауылыг (գերանի փոխարեն խաշաձև դրվող ձող), хауа կամ һауа, հայերեն խեչակ (երկճղի նեցուկ՝ բույսերի համար)³⁶:

Ժամանակակից թուրքերեն բառարաններում այս բառը հետևյալ բացատրությունն ունի. Haç (Ermeniceden), Hristiyanlığın simgesi sayılan ve birbirini dikey olarak kesen iki çizgiden ibaret olan şekil, խաչ—հայերենից—քրիստոնեության խորհրդանիշը համարվող և իրար ուղղահայաց հատող երկու գծերից առաջացած ձև³⁷ (պատկեր): Գորգարվեստում օգտագործվում է հետևյալ բնույթի նախադասություններում. selçuk halılarında iç ve dış bordürlerde çeşitli haç motifler sıralanmıştır—սելջուկյան գորգերի ներքին և արտաքին եզրագծերում շարված են տեսակ-տեսակ խաչի զարդամոտիվներ, Pazirlik halının zemininde 24 kare halında haçvari çiçekler var—Պազիրիկ գորգի ֆոնում 24 քառակուսի խաշաձև ծաղիկներ կան:

Վեսալ բառը,— նշում է Բ. Առաքելյանը,— հայերենից անցել է վրացերենին, ադրբեջաներենին, պարսկերենին, քրդերենին³⁸, ինչպես նաև Կեսառական Ասիական ժողովուրդների լեզուներին և աֆղաներենին, որոնք գորգի մի տեսակը խաշանիշ զարդամոտիվի պատճառով անվանում են Վեսալու յուսուս³⁹, «խաչու բուխարա»⁴⁰, «խաչու թուրքման»⁴¹ և «խաչու աֆղան»⁴²:

KETEN—հայերեն կտոր, կտավի տեսակ՝ կտավատ բառից: Նշանակում է կտավատի, յալինքն՝ վուշի թելերից գործված կտոր, թուրքերեն کتان—keten—քաթան կամ քեթեն: Այս բառի հայերենի հետ նմանություն ունեցող ձևերը,— գրում է Աճառյանը,— մեզանից են փոխառյալ⁴³:

Ըստ Հյուբշմանի հայերենից են փոխառյալ ասորերեն գəttau «բամբակ», եթովպերեն kəṭān «վուշ, կտավ», արաբերեն کتان—kattan, որից փոխառյալ է պարսկերեն katan «վուշ»⁴⁴: Վեթեն Հայաստանը հայերենից է կտավի,— նշում է Աճառյանը,— ուրեմն այս բոլոր բառերը ծագում են Հայաստանից, այն է Հայաստանի բնիկ խալդիների լեզվից, որից փոխառյալ է նախ ասորերենը և այստեղից էլ տարածված է ամեն կողմ (Scheftelowitz BB 29, 71 հայերեն բառը դնում է խալդերենից, իսկ ասուրականն էլ հայերենից)⁴⁵: Թուրքերենում կտավից կազմված մի շարք բառեր կան: Օրինակ՝ ketenci—կտավագործ,

³⁶ ՀԱԲ, հ. 2, էջ 334:

³⁷ M. Ali Ağakay, նշվ. աշխ., էջ 331:

³⁸ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1964, հ. 1, էջ 162, նաև ՀԱԲ, հ. 2, էջ 334:

³⁹ M. Campana, Oriental carpets, Milan, 1969, p. 136.

⁴⁰ O. Pictus, Oriental carpets, Switzerland, 1968, pl. XVI, S. Reed, Oriental carpets and rugs, London, 1972, pl. 95. Nahigian Brothers, Oriental rugs in the home. Chicago, 1913, p. 57.

⁴¹ H. Haak, Oriental rugs, London, 1960, pl. 35.

⁴² P. Liebetrau, Oriental rugs in colour, Denmark, 1970, pl. 41.

⁴³ ՀԱԲ, հ. 2, էջ 675:

⁴⁴ Նույն տեղում, էջ 676:

⁴⁵ Նույն տեղում:

ketencilik—կտավագործություն, keten halvası—թել-թել հրուշակ, keten tellerinden yapılm dokuma—կտավատի թելերից պատրաստված գործվածք:

ÖRNEK—հայերեն օրինակ բառից է⁴⁶ և նշանակում է «նախատիպ, նմուշ, օրինակ, 2. գաղափար, 3. առակ, նմանություն, 4. ցուցակ, 5. գրքի պատճեն, 6. եղանակ, ձև, կերպ, 7. նման, պես, կերպով»⁴⁷: Ըստ Աճառյանի հայերենը պահպանողներն awdenak ձևից է փոխառել, որի հիմքն է պարսկերեն ayīn, ayīna և հայերեն արւէն, որից շրջամաժ արւէն > օրէն: Բանասեր Հովհ. Գաղանձյանը նշում է, «թուրքերեն էօրնէք, որ սակայն հայերենից է փոխառյալ»⁴⁸, ի. Բուզագովը ևս թուրքերեն örneк բառի ծագումը վերագրում է հայերեն «օրինակին»⁴⁹: Նույն տեսակետն է պաշտպանում նաև Հ. Պետերսսոնը⁵⁰, իսկ Հ. Վամբերին սերտ կապ է տեսնում örneк-körnek (նմուշ) և kör-gor (տեսնել) բառերի միջև⁵¹: Նրան կրկնում է թուրք լեզվաբան Հ. էրենը⁵², բայց Աճառյանը նրան առարկում է, պատճառաբանելով, որ թուրքերենում այդպիսի բառակափոխությունը միանգամայն տարօրինակ է և «գոյություն չունի մյուս ալթայական ցեղակիցների մեջ, ուստի հաստատապես փոխառյալ է հայերենից»⁵³: Այսպես Աճառյանը եզրակացնում է. «հայերենից են փոխառյալ արևելյան թուրքական آرنالك—örnek, örnak «պատկեր, նմանություն, մի բանի նախատիպը, բուն օրինակը», օսմանյան آرنالك—örnek «նախատիպար, օրինակ, նմուշ», կազանի թաթարական ürnak, թուրքերենի միջոցով լազերեն ornegi, քրդերեն էօրնէկ, օրինէկ»⁵⁴:

Թուրքերենում հայերենից փոխառյալ օրինակ բառով կան մի շարք բարդ ու ածանցավոր բառեր ու դարձվածքներ: Այսպես՝ ornegi—օրինակի համար, örneğine göre—օրինակի համաձայն, örneк olmak—օրինակ լինել, örneк tutmak—օրինակել, örnekilik—օրինակելի տիպար: Թուրքերենի նորագույն բառարաններից մեկում örneк բառի դիմաց գրված է Ermenice orinag⁵⁵, örneğini çıkarmak—օրինակել, bu halının örneği çok güzeldir (şekil, model)—այս գորգի օրինակը շատ գեղեցիկ է (տեսակը): Դորգագործության բնագավառում թուրքերենում օգտագործվում են հետևյալ բնույթի նախադասություններում. selçuk halılarında geometrik örneкler göze çarpar—սելջուկյան գորգերում երկրաչափական օրինակներն են աչքի ընկնում, türk halı örneкleri—թուրքական գորգօրինակներ, halı örneğe göre dokunur—գորգը

⁴⁶ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն..., Ներածություն, էջ 377, Ս. Վ. Գաղանձյան, Բառարան գաղիերեն-հայերեն-տաճկերեն, Վենետիկ, 1886, էջ 570, նաև Ե. Զաքրեյան, նշվ. աշխ., էջ 465:

⁴⁷ ՀՀԲ, էջ 695, ՀԱԲ, հ. 2, էջ 1614:

⁴⁸ «Արևելյան մամուլ», 1907, № 934—935:

⁴⁹ А. Будагов, նշվ. աշխ., էջ 127:

⁵⁰ H. Petersson, Arische und Armenische Studien, Lund, Gleerup, 1920.

⁵¹ H. Vambery, Etymologisches Wörterbuch der Turko-tatarischen Sprachen, Leipzig, 1878, p. 78.

⁵² H. Eren, Türk dilinin étimologique sözlüğünden Örnekler, „XI, Türk dil kurultayında okunan bilimsel bildiriler“, 1966, „Ankara. 1968, II—L.

⁵³ ՀԱԲ, հ. 2, էջ 1615:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Pars Tuglaçlı, Okyanus, 20 yüzyıl ansiklopedik Türkçe sözlük, İstanbul, 1971, t. 3, s. 2244.

օրինակի համաձայն է գործվում, selçuklu halılarda haçın bir kaç örnegi vardır (çeşit, cins)—սելջուկյան գորգերում խաչի մի քանի օրինակներ կան (տեսակ): Հայերենից փոխառյալ օրինակ բառը թուրքերենի միջոցով մտնել է բալկանները և տարածվել զանազան լեզուների մեջ»⁵⁶,

ÇAP — հայերեն չափ: ՀՀԲ-ը հայերեն չափ բառի դիմաց գրում է. «տաճկերեն չափ» և նշում. «չափ կտավագործաց կամ ճարտարաց, առջն ۱۰ شرن»⁵⁷, Արիկյանը գրում է. «չափ ۱۰ خاب հայերենից փոխառյալ»⁵⁸, Նման մեկնություն է տալիս նաև Պ. Գալըպչյանը⁵⁹, Վերջերս հրատարակված թուրքերեն «Օքիանուս» ընդարձակ բառարանում ևս նշված է այդ բառի հայերենից փոխանցված լինելը և գրված է. «Ermence (osm. kutur, inglizce diameter, fransızca diameter)»⁶⁰, Թուրք հեղինակ Մեհմետ Ալի Աղաբայն իր բառարանում չափ բառով տալիս է մի քանի նախադասություններ՝ topun capı—հրանոթի չափը (տրամագիծը), irl çapta bir adam—մեծ չափի (խոշորակազմ) մի մարդ. Bu çapta bir eser—այս չափի (տարողությամբ) մի ստեղծագործություն, yar çap—կես չափ⁶¹, Թուրքերենում չափ բառով կազմված մի շարք բարդ ու ածանցավոր բառեր կան, որոնք լայնորեն օգտագործվում են: Օրինակ՝ çapı ölçmek—չափել, çap vermek—չափ տալ, orta çap—միջին չափ⁶², Գորգագործության մեջ՝ չափ բառը օգտագործվում է հետևյալ բնույթի նախադասություններում. büyük çapta bir halı—մեծ չափի մի գորգ, küçük çapta bir kilim—փոքր չափի մի կապերտ, orta çapta bir seccade—միջին չափի մի ուղեգորգ, halı sanatı dünya çapında geniş bir bilgidir—գորգագործությունը ծանոթ է համաշխարհային չափով (մասշտաբով):

Հայերեն չափ բառը թուրքերենի միջոցով փոխանցվել է բալկանյան և դանուբյան երկրների ժողովուրդներին: Օրինակ՝ սերբերեն čap, ռումիներեն ălap և այլն: Փոխանցվել է նաև հարևան ժողովուրդներին, վրացերենին, քրդերենին և այլն⁶³: Աճառյանը նշում է. «հայերենից է փոխառյալ օսմանյան լեզվում چاب—չափ, چابلامق—čaplamaq—չափել»⁶⁴:

PETEK—հայերեն փեթակ, որը փոխ է առնված պահլավերեն petak—կողով բառից: Սա էլ իր հերթին վերցված է սանսկրիտերեն petaka կամ peteka բառից և նշանակում է կողով, արկղ, որի հիմքն է peta—կողով⁶⁵:

Հայերենից փոխանցված petek բառը թուրքերենում⁶⁶ և օգտագործվում է զարդարված ստի տարբեր բնագավառներում փեթակաձև հյուսվածքների, իսկ ճարտարապետության մեջ մինարեի վերնամասի զարդաձևեր իմաստով⁶⁷: Օրինակ՝ bal petegi görünüşünde süsleme—փեթակաձև զարդ կամ petekli—

56 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, Ներածություն, էջ 379:

57 ՀՀԲ, հ. 1, էջ 325, 511:

58 Մ. Արիկյան, Գործնական բառարան տաճկերեն-հայերեն, Կ. Պոլիս, 1893, էջ 253:

59 Պ. Գալըպչյան, նշվ. աշխ., էջ 113:

60 Pars Tuglacı, Okyanus. t. 1, p. 428.

61 M. Ali Ağakay, Türkçe sözlük, Ankara, 1959, p. 161.

62 Д. А. Магазанник, նշվ. աշխ., էջ 109:

63 ՀԱԲ, հ. 5, էջ 737:

64 Նույն տեղում:

65 ՀԱԲ, հ. 2, էջ 1197:

66 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, Ներածություն, էջ 377:

67 Д. А. Магазанник, նշվ. աշխ., էջ 488:

փեթակաձև: Իսկ գորգարվեստի բնագավառում օգտագործվում է հետևյալ բնույթի նախադասություններում. petek gözlü halı— փեթակաձև (աչքով) գորգ, կամ bazı halılarda bal petegine benzeyen motifler var — մի շարք գորգերում մեղրափեթակի նմանվող զարգաձևեր կան, petek doku — փեթակաձև հյուսվածք, bal petegi kumaş— փեթակաձև զարդերով կերպաս:

Փեթակ բառը հայերենի միջոցով փոխանցվել է նաև հարևան ժողովուրդներին: Օրինակ՝ քրդերեն petek, արևելյան թուրքերեն پتک—petek— փեթեկ, օսմանյան թուրքերեն پتک—petek մեղրախորիսխ, փեթակ: Թուրքիայի երբեմնի մի շարք հայաշատ շրջաններում և քաղաքներում՝ էնկյուրի (Անգարա), Սեբաստիա (Սվազ), Տերհնտե և այլն, ժողովրդական խոսակցական լեզվում օգտագործում են «փեթակ»⁶⁸, «Ատանայի թուրք և հույն բարբառով՝ փեթէք»⁶⁹ «մեղրախառն մոմ» կամ գավառական թուրքերեն پتک—petek «ալյուրտուն» (Կամուս, թուրք. թարգմանություն Գ. 845), որ մեր գավառական փեթակ հոմանիշ բառից է փոխառված⁷⁰:

HİM—հայերեն հիմֆ բառից է: ՀՀԲ-ում գրված է՝ «հիմն—տաճկերեն հիմ, թէմէլ»⁷¹: Առձեռն բառարանում նշված է՝ «հիմն՝ ի վեր—տաճկերեն հիմն»⁷²: Գրաբարում ունենք հիմն արկանել—հիմք դնել: Աճառյանը գրում է. «...հատկապես Կեսարիայի, Յոզգատի և Ադանայի թուրքերենը, որ ունի սովորական և հասարակ կյանքի վերաբերյալ բազմաթիվ փոխառություններ հայերենից, ինչպես ...him «հիմք»⁷³: Հայերենում ասում ենք գորգի հիմքը կամ հենքը: Ըստ Ստ. Մալխասյանի գրաբարյան ձևն է հիմն, իսկ նրա հոգնակին՝ հիմք⁷⁴: Հիմն նշանակում է նաև «հատակ, խորք, տաճկերեն տիպ»⁷⁵:

ARİŞ կամ ERİŞ—հայերեն առէջ կամ առէչ բառից: Կազմված է առ մասնիկից և էջ (իջանել) արմատից:

Գրաբարում առէջֆ կամ առէջը ունի տարբեր իմաստներ: Օգտագործվել է նաև սարգի ոստայնի համար, իսկ հյուսվածքագործության մեջ «բանվածքին երկայնքը և ուրիշ ձգվածքին»⁷⁶, «հյուսվածքի թելերն են»⁷⁷: Դրա համար էլ առէջք նշանակում է «իջվածք, դրվածք, նստվածք, տաճկերեն էրիշ»⁷⁸, «ձգվածք»⁷⁹: Հետևաբար առէջները «կտավի երկայնքով ձգվող թելերն են»⁸⁰: Ըստ «Բառգրքի» առէչ նշանակում է «հենք ոստայնի, այսինքն բաղմունք ընդ երկայնուի ձգեալ թելից... առէչքն են թելք երկայնուե ոստայնին, այսինքն կտաւոյ և ալլոց գործվածոց. իսկ թեզանքն են թելք լայնութեն, տաճկերեն

68 ՀԱՐ, հ. 2, էջ 1197:

69 «Արեւելք», 9.XI.1888:

70 ՀԱՐ, էջ 1197:

71 ՀՀԲ, էջ 227:

72 ԱՐ, էջ 496:

73 Հ. Աճառյան, Հարց լեզվի պատմություն, I մաս, էջ 215:

74 Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1943, էջ 106:

75 «Բառգրք», հ. 2, 4. Պոլիս, 1846, էջ 84:

76 ԱՐ, էջ 115:

77 Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 132:

78 ՀՀԲ, հ. 1, էջ 47:

79 Մ. Զամչյան, Քերականություն հայկազյան լեզուի, Վենետիկ, 1831, էջ 9:

80 ՀԱՐ, հ. 1, էջ 257:

մէզտուտ, սայիֆէ, պարսկերեն տիրադի... իսկ առէջք նշանակում է իջմունք, դիրք, նստուածք, տաճկերեն էնիշ»⁸¹:

Թուրքերեն «Օթիանոս» բառարանը ևս նշում է, որ arış < ar, որ նշանակում է նաև çözügün, ապա dokuma tesgâhlarında yukarıdan aşağıya doğru birbirine koşut olarak yanyana uzatılan iplikler olup, bunların arkasından mekik geçirilerek mekikğin bıraktığı iplikler tarakla sıkıştırılmak suretiyle kumaş vücutte gelir (İngilizce warp, Fransızca chaîne) գործվածքի դազգահներում վերևից ուղիղ ներքև, մեկը մյուսին զուգահեռ կողք-կողքի երկարող թելեր, սրանց ետևից մաքուր անցկացնելիս, թողած թելերը սանրով սեղմելով, կերպասը մեջտեղ է դալիս: Միաժամանակ գրված է. arış, eriş *kars. argaç⁸², իսկ գորգարվեստի մասնագետ թուրք հեղինակ Ներիմանը ընդգծում է. Dogu bölgesinde cozüğü; uzatma, eriş ve argaç, atkıya; geçme, masur, atma ve argaç adı verilmektedir⁸³—արևելյան շրջաններում հենքին երկայնացված, էրիշ, արըշ կամ արգած, իսկ նետվածքին՝ անցնող, մասուր, ատմա և արգաճ անունն է տրվում: Հետևաբար, ինչպես հայերենում, այնպես էլ Արևելյան Անատոլիայի երբեմնի հայկական նահանգների թուրքական բարբառներում arış և argaç բառերը մեկը մյուսի փոխարենն ազտագործվում են գորգագործության և հյուսվածքագործության մեջ, հակառակ այն բանի, որ çözügün-ները (հենքաթելերը) ավելի ամուր ու դիմացկուն են, որովհետև ավելի շատ ոլորված և մի քանի տակ են լինում, իսկ հանգույցները սեղմող atki-ն (միջնաթելի) թելերը քանակով ավելի քիչ՝ ու քիչ էլ ոլորված են լինում: Հայերենի այս երկիմաստ նշանակությունը նույնությամբ պահպանված է նաև թուրքերենի գավառաբարբառներում. arış նշանակում է dokumalarda boyuna atılan iplik⁸⁴—գործվածքներում երկայնքին գցվող թել կամ halının ilmeleri sıkıstırmak için genişliğine atılan atkılara arış adı verilir⁸⁵—գորգի հանգույցները սեղմելու համար լայնքին գցվող թելերին առէջ անունն է տրվում:

Ըստ Հովհ. Գազանճյանի «հայերենից փոխառյալ է թուրքերեն — اریش eriş— առէջք», սակայն Աճառյանը հարց է տալիս. «բայց ինչո՞ւ գրված է: Տ և ոչ Ը, որ թուրքերենում հաճախադեպ մի հնչյուն է»⁸⁶: Ըստ Ե. Չազրճյանի առէջ թուրքերեն նշանակում է «էրիշէ»⁸⁷: Հետաքրքիր է, որ Ա. Բուդագովի կարծիքով այս բառը բացի տաճկերենից (այսինքն թուրքերենից—Հ. Գ.) ուրիշ որևէ թուրք-թաթարական լեզվում չկա⁸⁸: Սա առավել ևս հաստատում է նրա հայերենից փոխառություն լինելը: Բայց Վ. Ռադլովը իր 8 հատորանոց թուրքական լեզուների ընդարձակ բառարանում⁸⁹, է. Սևորոյանը իր թուրքերեն լեզուների ստուգաբանական բառարանում⁹⁰, ազտվելով տարբեր հեղինակների

⁸¹ «Բառգիրք», հ. 1, էջ 116:

⁸² P. Tuğlacı, Okyanus, t. 1, p. 129.

⁸³ Doc. dr. Neriman. Նշվ. աշխ., էջ 20:

⁸⁴ M. N. Ozon, Turçe cep sozlugu, Istanbul, 1970, p. 26.

⁸⁵ Y. Durul ve O. Aslanapa, Selduklu halıları. Istanbul, 1973, p. 12.

⁸⁶ «Հուշարձան Մխիթարյան միաբանության», Վիեննա, 1911, էջ 328, ՀԱԲ, հ. 1, էջ 258:

⁸⁷ Ե. Չազրճյան, Նշվ. աշխ., էջ 54:

⁸⁸ А. Будагов, Նշվ. աշխ., հ. 2, 1893, էջ 28, նաև ՀԱԲ, հ. 1, էջ 28:

⁸⁹ В. В. Радлов, Опыт словаря тюркских наречий, т. I, СПб., 1893, стр. 1226.

⁹⁰ Э. В. Севортян, Этимологический словарь тюркских языков, М., 1974, стр. 170.

ուսումնասիրություններից, նշում են, որ կան հետևյալ բառերը՝ aruṣ⁹¹, āriṣ⁹², ārus⁹³, āriṣ⁹⁴, öryu⁹⁵, aruṣ, öruṣ⁹⁶, որոնք նշանակում են կտավի հենքը և բոլորի էլ հիմքն է ar-, ār- ռաստ երևույթին, — գրում է հեղինակը, — Թր-հյուսիս, գործել, իսկ -ու պ կամ -ու պ կարող է ունենալ գործիքային նշանակություն⁹⁷։ Սևորտյանը միաժամանակ նշում է, որ արуш-ը բառի միակ ձևը չէ, այլ կան նաև թուրքական բարբառային араç, կարայիմյան Ղրիմի բարբառով арыч և әрч ուղբեկական բարբառով, ապա ընդգծում է. «Իհարկե վերջին գ-ն չի կարող ш-ից առաջացած լինել, բայց ավելի շուտ հակառակը կարող է լինել...»⁹⁸։ Աճառյանի վերոհիշյալ հարցադրումը, թե ինչպես է, որ հայակերտ առէջ բառի չ-ն կամ ջ-ն թուրքերեն փախառության ժամանակ դառնում է շ, և Սևորտյանի վերոհիշյալ մեկնությունը թե՛ գ-ն չի կարող ш-ից առաջացած լինել, այլ ընդհակառակը՝ գ>ш-ն, խոսում է ի նպաստ այն տեսակետի, որ առէջ բառը հայերենից է անցել թուրքական լեզուներին և դարձել է arıç։

Առէջի համար թուրքական գավառաբարբառներում նշված է apaç, اریص, آریش—araç⁹⁹, որը հատկապես տարածված է Թուրքիայի նախկին հայկական շրջանների ժողովրդա-խոսակցական լեզվում։ Այդ բառը նույն հնչյունով ու նշանակությամբ առկա է նաև Գորիսի և Ղարաբաղի բարբառներում, իսկ հայկական մի շարք այլ բարբառներում այն օգտագործված է գրաբարյան հոգնակի ձևով՝ առէջք, որը նշանակում է հենքաթելերի ամբողջությունը։ Սեբաստիայի բարբառում առէջքը նշանակում է նաև «մեծ մաքրք, որի վրա շուգհակը թել է փաթաթում»¹⁰⁰։ Ըստ Վ. Ռադլովի, āriṣ-էրիշ (աղբեջաներեն), اریش — (օսմաներեն), арыш (չաղաթայերեն գրավոր լեզվում) նշանակում է основа ткани—der Aufzug des Gewebes, այսինքն կտավի հենք¹⁰¹, իսկ арш—آریش չաղաթայերեն նշանակում է ремесло ткача—weberhandwerk, այսինքն շուգհակի արհեստ¹⁰²։ Թուրքական և թյուրքական բարբառներում ևս հայերենի նման ерш (eriṣ) ունի այլևայլ իմաստներ։ Арыш (ariṣ) և аруш (aruṣ) թուրքական և թուրքմենական լեզուներում նշանակում է կտավի հենքը, կտավի, գորգի, կերպասի ուղղահայաց թելերը, տորգի (դազ-գահի) ուղղահայաց ձգված հենքաթելերը¹⁰³։

⁹¹ «Древнетюркский словарь». Л., 1969, стр. 58.

⁹² Besin Atalay, Divanü lûgat-it-Türk dizini, Endeks, Ankara, 1943, p. 33. Velet İzbudak, El-İdrak haşiyesi, İstanbul, 1936, p. 6.

⁹³ Gabaian A. von, Altürkische Grammatik, 2 Aufl. Leipzig, 1950, p. 299.

⁹⁴ Zajączkowski A. Studja nad językiem staroosmańskim, I (Kellia i Dîmna), 1934, Krakow, 1934. նաև թուրքական բարբառներում՝ Türkiye'de halk ağzından söz derleme dergisi, II, İstanbul, 1940, p. 545.

⁹⁵ В. В. Радлов, նշվ. աշխ., էջ 1226.

⁹⁶ Bang W. Turkologische Briefe aus dem Berliner öngarischen Institut Briefe Varla Varla momentli, tom VI, p. 169.

⁹⁷ Э. В. Севортян, նշվ. աշխ., էջ 189.

⁹⁸ նույն տեղում, էջ 165.

⁹⁹ Türkiye'de halk ağzından derleme sözlüğü, t. I, Ankara, p. 292, 1963.

¹⁰⁰ ՀԱԲ, հ. 1, էջ 258.

¹⁰¹ В. В. Радлов, նշվ. աշխ., էջ 772.

¹⁰² նույն տեղում, էջ 293.

¹⁰³ Э. В. Севортян, նշվ. աշխ., էջ 293.

է. Սևորտյանը նշում է. «Թյուրքական арыш—նրա ծագումը գալիս է հնդեվրոպական լեզուներից»¹⁰⁴, Հակադրվելով Հյունքեարպեյենտյանին¹⁰⁵ և Բուդագոյին, Աճառյանը գրում է. «նրանք էրիշ բառը պարսկերեն են համարում սխալմամբ»¹⁰⁶, Այսպիսով, հայերեն առէշ(ք) բառը թուրքերենին է անցել arış կամ eriş ձևով, որը շարունակվում է օգտագործվել ժողովրդական բարբառներում և գրական լեզվում:

Ariş բառը 1932 թ. հետո Արևելյան Անատոլիայի ժողովրդական խոսակցական լեզվից գրական թուրքերենին փոխանցված բառերի շարքումն է դասվում, որպես չափի միավոր. eski dokumacıların kullandıkları bir ölçü (Balıkeser, Kütahya)¹⁰⁷—հնում ոստայանականների օգտագործած չափը (Բալըքեսեր, Կյոթահիա):

CITI կամ CITIK—հայերեն ցիտ(ф), վիզ, եզբեֆ¹⁰⁸, վիզ, պարանոց կամ ուլն¹⁰⁹, Արաբերենում ևս ճիտ—جيد նշանակում է վիզ¹¹⁰, իսկ ըստ ԱՔ-ի ճիտ, ճտի (ռամկերեն) նշանակում է վիզ: Նրանից կազմված է ճիտակ—վզնոց, որի հնագույն ձևն է ճէտակ, հավանաբար պահլավերեն c'etak բառից¹¹¹, Հայերենի բարբառներում ճիտ օգտագործվում է նաև գորգի բերան իմաստով: Դորգի ճիտքը գործվում է գորգի կապերտամասից և խավահանգույցներից առաջ՝ գորգի սկզբում և վերջում: Դրանք գորգի կապերտի հետ մեկտեղ ամրացնում և քալքայումից պաշտպանում են գորգահանգույցները:

Թուրքերենում ճիտ բառը գորգագործության մեջ ունի նույն գործածությունն ու իմաստը, ինչ հայերենում: Օրինակ՝ Püskülden sonra kilim ve citik kısmı dokunur¹¹² — ծոպից հետո կապերտը և ճիտքը գործվում է: Թուրքերենի բառարաններում citi բառի դիմաց գրված է՝ halı kilimî örgüsünün sökölmemesi için saçakların dip kısmında yapılan bir örgü—ճիտին գորգի կապերտամասի գործվածքը չքանդվելու համար ծոպերի հենց հիմքից մի հյուսվածք է, ինչպես նաև՝ halıların kenarlara gelen iplikleri sonradan çöölüp atmamak için dokunurken kenarlarına tezgâhta yapılan düğümler¹¹³—գորգի եզրերին մնացող թելերը վերջում չքանդվելու համար գործելու ժամանակ դազգահի վրա կատարվող հանգուցներ:

HALI—հայերեն գորգ: Թուրքերենը բազմաթիվ փոխառություններ ունի արաբերենից, որոնց շարքում նաև խալը (հալը) գորգ բառը: XII դ. արաբ աշխարհագիր Յակուտ էլ-Համավին, Հայաստանի Վան և Կարին քաղաքների տեղագրության ժամանակ վկայակոչում է IX դ. արաբ ճանապարհորդ Աբու Ալնիին. «Վանում մեծ գորգեր էին գործվում», իսկ Կալի կալայում (Կարին քաղաքում قالیق) — գործված գորգերը, նրա վկայությամբ, նույն քաղաքի անվամբ կոչում էին «կալի» — قالی, որը հետագայում դառնում է «խա-

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 165:

¹⁰⁵ Յ. Հյունքեարպեյենտյան, Ստուգաբանական բառարան, Պոլիս, 1894:

¹⁰⁶ ՀԱՔ, հ. 1, էջ 258:

¹⁰⁷ „Türkiye’de halk agzından derleme sözlüğü“, № 1, A, Ankara, 1963, p. 324.

¹⁰⁸ ԱՔ, էջ 529:

¹⁰⁹ «Բառգիրք», հ. 1, էջ 116:

¹¹⁰ Մ. Արիկյան, նշվ. աշխ., էջ 168:

¹¹¹ ՀԱՔ, հ. 4, էջ 651—652:

¹¹² Y. Durul ve O. Aslanapa, նշվ. աշխ., էջ 12:

¹¹³ P. Tuglaci, նշվ. աշխ., հ. I, էջ 475:

լի»¹¹⁴։ Այս բացատրությունը տեղ է գտել նաև «Խալամական հանրագիտարանում»¹¹⁵։

Կան նաև հեղինակներ, որոնք ենթադրում են, որ խալի արաբերեն-թուրքերեն բառը առաջացել է հայերեն խավ բառից։ Օրինակ՝ խավ <խավլի <խավլի—hav>havli>halı կամ xav>xavli>xalı։ Բառս գորգագործության բնագավառում օգտագործվում է հետևյալ բնույթի նախադասություններում՝ du-gümlü halısı—հանգուցավոր գորգ, duvar halısı—պատի գորգ, namaz halısı—աղոթքի գորգ, Türklerin islam devrinde yaptıkları halılarda insan resmi yok dur—խալամական շրջանում թուրքերի պատրաստած գորգերում մարդկային պատկերներ չկան¹¹⁶։

ARGAÇ — հայերեն արկած-անկում։ Թուրքերենում գորգի հենքը ձևավորող զույգ, ուղորուն բրգյա կամ բամբակյա ուղղահայաց ձգվող թելերի համար է օգտագործվում։ Օրինակ՝ Tezgâha dikina gerilmiş cözgüleri argaç adı verilir¹¹⁷—դազգահի երկայնքին զցվող հենքաթելերին արգաչ անունն է տրվում. կամ՝ Argaç բառի դիմաց գրված է՝ dokuma tezgâhlarında enine atılan iplik. atki¹¹⁸—գործվածքների դազգահների լայնքին զցվող թելը՝ ատքը։ Օսմանյան կայսրության որոշ շրջաններում արգաչը տարբեր անվանումներ է ունեցել։ Այսպես՝ թեզան բառի դիմաց գրված է. «արիշ, արղաշ, պեզին էն թելերի»¹¹⁹։ Գրաբարում ունենք արկած, որ նշանակում է ձգված, հագած, վրան առած¹²⁰։ Ունենք նաև արկում՝ ձգվածք, նետվածք իմաստով¹²¹։ Հնչյունական և իմաստաբանական առումով թուրքերեն argaç բառը նման է հայերենին։ Այն կազմված է արկ արմատից, որը հին հայերենի ամենակենսունակ բառարմատներից է և նշանակում է ձգել, նետել, նաև տարածել, փռել, սփռել¹²²։ Դրանցից են կազմված գրաբարյան արկանելի «ծածկոց, զգեստ» կամ «կապերտ» բառը¹²³։ Արկածը, հավանաբար, կապ ունի նաև նույն արմատից առաջացած հայերեն անկումով հետ, որը իմաստային առումով մոտ է արկանելի բառին և նշանակում է «բանվածք»¹²⁴, «գործվածք»¹²⁵։ ՀՀԲ-ում անկումը բառը բացատրված է՝ «... ածանցի 'ի բայէս անկանել, ոպ. արկումածն 'ի բայէն արկանել, և նշանակէ զոստայնն. այ զգործածն կտաւեղինաց, կամ կերպասեաց, և կմ զոստայնանկումն, որ է անկանելն զոստայնս, գործումած, կմ հիւսած»¹²⁶։ Գրաբար

¹¹⁴ Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersburg und Paris herausgegeben von Ferdinand Wüstenfeld, Leipzig, 1924, tom. IV, p. 19; նաև A. Sakisian, նշվ. աշխ., էջ 27, Հ. Վ. Յուրյան, Գորգը հայոց մոտ, Վենետիկ, 1947, էջ 20։

¹¹⁵ „Encyclopedie de L'Islam, supplement“, Leyde, 1938, p. 116. „Halı“.

¹¹⁶ P. Tuglaci, Okyanus, հ. 2, էջ 992.

¹¹⁷ Y. Durul ve O. Aslanapa, նշվ. աշխ., էջ 12.

¹¹⁸ M. Ali Agakay, նշվ. աշխ., էջ 50, նաև H. Sedat Oksal, Küçük türkçe sözlük, İstanbul, 1964, p. 25.

¹¹⁹ Ծ. Չագըճյան, նշվ. աշխ., էջ 151։

¹²⁰ ՀՀԲ, հ. 1, էջ 57։

¹²¹ ԱԲ, էջ 140։

¹²² ՀԱԲ, հ. 1, էջ 320։

¹²³ Նույն տեղում, էջ 197։

¹²⁴ ՆՀԲ, էջ 67։

¹²⁵ Է. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 104։

¹²⁶ ՀՀԲ, հ. Բ, էջ 38։

արկանելի և անկուած բառերը մեր մատենագիրների մոտ օգտագործված են նաև գորգ իմաստով¹²⁷:

Արևելյան Անատոլիայի գորգագործության պատմությամբ զբաղվող Ներիմանը նշում է. Dogu bülgesinde çozgüğe uzatma, eriş, arış ve argac, atkıya; gecme, masur, alma ve argac adı verilmektedir¹²⁸ — արևելյան շրջաններում հենքին, երկայնացված, էրիշ, արըշ կամ արգաճ, իսկ նետվածքին՝ անցնող, մասուր, ատմա և արգաճ անունն է տրվում:

Argaç բառը, ըստ թուրք հեղինակների, մինչև 1932 թ. թուրքերեն լեզվում չներգրավված և 1932—1960 թթ. ժամանակամիջոցում թուրքիայի այլևայլ շրջաններում՝ հատկապես Արևելյան Անատոլիայի երբեմնի հայկական նահանգների ժողովրդական խոսակցական լեզվում եղող թուրքերեն կամ թուրքացված բառերի շարքն է դասվել: Հետևաբար, նրանք ընդունում են, որ այդ բառը թուրքերեն չէ: Argaç բառի դիմաց բերված է ժողովրդական խոսակցական լեզվի տարբեր բարբառներում եղած նրա տարբերակները՝ argeç, argıç, argaç և տված է հետևյալ բացատրությունը՝ dokumalarda cözgü üzerline enligine atılan ip¹²⁹ — գործվածքներում հենքի վրա լայնքին նետվող թել:

VARGEL — հայերեն վերագամ: Այս բառն օգտագործվում է գորգի հենքում տեղակայված այն ողորկ գավազանի համար, որը հենքաթելերի արանքից վար ու վեր է շարժվում գորգահանգույցները կապելուց առաջ, որպեսզի թելերը իրար չխառնվեն: Թուրքերենում ասում են. Vargel agacı gucu açmak içindir¹³⁰ — վարգել փայտը ծայրը բաց անելու համար է, իսկ ժամանակակից թուրքերենում սկսել են օգտագործել varagele բառը, որն արտահայտում է նույն գործողությունը՝ her hangi bir makinanın bir dogrultuda gidip gelerek iş goren parçası¹³¹ — ամեն մի մեքենայի հավասարաչափ գնալ-գալով գործ տեսնող մասը: Դրաբարում նման աշխատանքի համար օգտագործված է ի վեր կալեալ կամ ի վեր գալ, որը նշանակում է վեր գալ. ունենք նաև ի վեր արկանել — վար ձգել իմաստով¹³²: Նման դարձվածքների կողքին կան նաև վերագամ կամ վերագայիլ բառերը, որոնք նշանակում են վերից վար գալ¹³³: Հայկական բարբառներում կա նաև վէ (կալ): Թուրքերենում var արմատը երբեք չի արտահայտում ներքև, վար, ցած իմաստը, այլ միայն նշանակում է կա, գոյություն ունի, կամ հասնել, հետևաբար և՛ հնչյունային, և՛ իմաստային առումով համապատասխանում է ո՛չ թե թուրքերենին, այլ հայերենին:

TEŞİ¹³⁴ — Ծրեանի, Ախալցխայի, Կարինի բարբառներով թեշի կամ թեշիկ, որը նշանակում է թել մանելու իլ¹³⁵: Թուրքիայի արևելյան նահանգներում այս բառը մինչև այժմ օգտագործվում է, բայց գրական թուրքերենում

127 Հ. Քյուրգյան, Գորգը հայոց մոտ, Վենետիկ, 1947, էջ 12, 18:

128 Doç. Dr. Neriman, նշվ. աշխ., էջ 20:

129 „Türkiye’de halk agzından derleme sözlüğü, № 1, A“, Ankara, 1963, p. 308.

130 Y. Durul ve O. Aslanapa, նշվ. աշխ., էջ 12:

131 M. Ali Ağakay, նշվ. աշխ., էջ 795:

132 ՀՀՔ, հ. 1, էջ 606:

133 ՀՀՔ, հ. 1, էջ 368, նաև ԱՔ, էջ 756:

134 N. Görgünay, նշվ. աշխ., էջ 16:

135 Հ. Ահառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 357:

չկա: Գորգագործության բնագավառում ասում են. Teşli ile sūmak'tan ve havdan yün egrilir¹³⁶— թելիով սումաքից և խավից բուրգ է ոլորվում: Այս բառը ձևական, հնչյունաբանական և իմաստային առումով սերտ համամանություններ ունի համապատասխան հայերեն բառի հետ: Թուրք հնդի-նակ ներիմանի նշված աշխատությունում կարգում ենք. İplik yapısında Doğu Anadolu'da genellikle „teşli“ adı verilen „İg“ kullanılır— թելի պատրաստման ժամանակ Արևելյան Անատոլիայում ընդհանրապես «թելի» անունը տրվող «իկ»-ն են օգտագործում:

TERT—հայերեն քերթ, «ծաղիկի, բույսի, տերևի, թղթի, որևէ բարակ թիթեղի թերթ»¹³⁷, Օգտագործվում է նաև գորգագործության մեջ: Օրինակ՝ բազմաթերթ ծաղիկ, հինդ թերթանի ծաղիկ կամ վեց թերթանի աստղ (ղարդամուտիկի համար): Հայերեն թերթ բառը նույնությամբ փոխանցվել է թուրքերենին՝ tert, որն ունի նաև այլ գործածություն՝ խմորեղենի թերթերի համար:

TAV—քառ. Հստ Աճառյանի բնիկ հայերեն բառ է¹³⁸, նշանակում է «1. Թանձր, խիտ, 2. մազ, բրդոտ, տաճկերեն «թիւլի», 3. հաստ ու Թանձր ձայն»¹³⁹:

Թուրքերենում հայերենից փոխանցված քառ արմատով մի շարք բարդ ու ածանցավոր բառեր կան: Օրինակ՝ tavlı — tavı olan, tavlanmış— թավավոր, թավ ունեցող: Կազմված է հենց hav+lı խավավոր բառի նման tav+lı, Բայակերտ ձևն է tavlama=tav vermek, tavına getirmek: Օգտագործվում է նաև հակառակ իմաստով tavsız— թավ չունեցող, անթավ, թավաղերծ: Օրինակ՝ tavı olmiyan, tavlannamış¹⁴⁰. Կա նաև tavlu — تالو բառը, որը նշանակում է գեր, պարարտ¹⁴¹: Համաձայն թուրքերեն մի այլ բառարանի tavlama նշանակում է՝ 1. su serperek tav vermek — չրցան անելով նստած խավը բարձրացնել, իսկ փոխաբերական իմաստով՝ մեկին իր արժանիքից ավելի գովել, ունեցնել—değerinden çok övmek: Կա նաև tavicı¹⁴² — թավ տվող, վատ արարքը խրախուսող, սրիկա, ստոր, rogue. scamp, swindler¹⁴³:

Հստ ՆՀՐ-ի հայերեն քառ բառը թուրքերեն թավու — tavlu — تالو թիւլլու tüylü — մազոտ բառի հետ լծորդ է: Իսկ ըստ Մորթմանի հայերեն քառ բառը ցեղակից է թուրքերեն «թիւլ tüy — توی = մազ» բառի հետ (Zeitschrift für Deutschen Morgenländischen Gesellschaft, հ. 1—83 (1229)¹⁴⁴:

Հստ ժամանակակից թուրքերեն բառարանների՝ tüy նշանակում է «բարակ թել, աղվամազ», բացատրության հետ նշված է նաև՝ bazı dokumalar üzerinde görülen ince, kısa, yumuşak ve sık teller — մի շարք գործվածքների վրա երևացող բարակ, կարճ, փափուկ և սեղմ թելերը: Նրանից կազմված tüylü բառը բացատրված է՝ 1. tüyü olan — թավ ունեցող, 2. uzun tüylerl

¹³⁶ N. Görgünay, նշվ. աշխ., էջ 16:

¹³⁷ ՀԱԲ, հ. 1, էջ 175:

¹³⁸ ՀԱԲ, հ. 2, էջ 163:

¹³⁹ ԱԲ, էջ 320:

¹⁴⁰ M. Ali Ağakay, նշվ. աշխ., էջ 242:

¹⁴¹ Մ. Արիկյան, նշվ. աշխ., էջ 141:

¹⁴² M. Nihat Özön, Okullar için Türkçe cep sözlüğü, İstanbul, 1970, p. 491.

¹⁴³ Akçit, Türkçe-İngilizce okul Lugatı, İstanbul, 1955, p. 643.

¹⁴⁴ ՀԱԲ, հ. 2, էջ 163:

olan kilim¹⁴⁵—երկար խավ ունեցող կապերտ: Թուրքերեն մի այլ բառարան tūy բառին տալիս է հետևյալ բացատրությունը. bazı dokumalar üzerinde olan hav—մի շարք գործվածքների վրա եղող խավ¹⁴⁶:

DORON կամ DORUN տառն կամ տարուն: Թուրքերեն kök boyası, լատիներեն madder—rubia tinctorum, garance բույսի արմատից ստացվող կարմիր ներկն է: Արևելյան Անատոլիայի նահանգներում և Կապադովկիայի երբեմնի հայաշատ գյուղերում տորոն բառը օգտագործվում է որպես բույսի և ներկի անուն:

AZAP (III)—հայերեն աղբ(ն), սաչագ, Բէօճիլ¹⁴⁷: Ըստ թուրքերեն գավառական բառարանի—dokumada bir ilmekteki iki cozgū tellinden birincisi (Bor, Nigde)¹⁴⁸—գործվածքում մի հանգույցում երկու հենքաթելերից առաջինը (Բոր, Նիգդե՝ Կապադովկիայի քաղաքներից): Ըստ Աճառյանի՝ աղբ գործելիք կտավի սկզբի ծոպերը՝ թելերը¹⁴⁹:

Պատմա-լեզվաբանական տեսանկյունից դիտված վերոհիշյալ քննությունը մեղ հանգեցնում է այն եզրակացության, որ գորգագործության բնագավառում թուրքերենում մինչ այժմ գործածության մեջ եղող հայերեն բառերի առկայությունը ինքնին վկայում է, որ հայերը զգալի մասնակցություն ու դեր են ունեցել սելջուկ-թուրքերի, ապա նաև օսմանյան տիրապետության ժամանակ գորգագործության զարգացման գործում և XIII—XV դդ. երբեմնի հայաշատ Կապադովկիայում գործված «սելջուկյան» անվանվող գորգերը հիմնականում գործվել են հայկական զարդարվեստի ավանդույթներով և հայ աշխատավորների ձեռքերով:

АРМЯНСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В ТУРЕЦКОМ, УПОТРЕБЛЯЕМЫЕ В КОВРОДЕЛИИ

АРУТЮН ГАЯЯН

Резюме

В турецком языке по сей день наличествуют некоторые слова и термины армянского происхождения, употребляемые в ковроделии: tel, hav, haç, keten, örnek, çar, petek, him, arış, citl, halı, argaç, azap.

Указанные заимствования свидетельствуют о том, что не только в период румынско-сельджукского султанства (XI—XIV вв.), но и Османского владычества (XV—XX вв.) влияние армянских мастеров ковроделия на развитие турецкого ковроделия было велико. Знаменитые, именуемые «сельджукскими» ковры, изготавливавшиеся в XIII—XV вв. в Каппадокии, в основном создавались руками армянских мастеров.

¹⁴⁵ M. Ali Ağakay, նշվ. աշխ., էջ 778.

¹⁴⁶ M. N. Özön, նշվ. աշխ., էջ 523.

¹⁴⁷ ԱՐ, էջ 3.

¹⁴⁸ „Derleme sözlüğü“, I, Ankara, 1963, p. 435.

¹⁴⁹ ՀԱՐ, հ. 1, էջ 84.